

ԳԱՄԱՂԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ

* * *

Այնպես հեզասահ ջութակը կրկին
Իր ողջ հմայքով մեջս է մտել,
Ու ես չգիտեմ, ե՞ս եմ ջութակին,
Թե նա ինձ գտել:
Մարմինս չկա, ծնվել է հոգիս –
Յոգեմվազ է, ինքնավերժանում,
Աստվածահաճո վերնաքրվել
Վե՛ր եմ բարձրանում:
Իմ դեմ դռներն է բացել երկինքը –
Փոքրիկ Յիսուսն է ինձ իր մոտ կանչում,
Ջութակը ես եմ, աղեղն է ինքը,
Որ ինձ հպվելով հենց ինքն է հնչում:
Այս ո՞վ շրթներիս հարմոն դիպցրեց
Ու շունչս փոխվեց հոգեմեղեդու,
Ո՞վ իմ բառերին իմաստ շնորհեց,
Տեր, դա ես էի, թե դու էիր, դու՛:
Այնպես հեզասահ, նաև աննկատ
Նորից ջութակը մեջս է մտել,
Ու ես չգիտեմ, Տե՞րն է ջութակին,
Թե ջութակն ինքն է տիրոջը գտել:

* * *

Փակ գիրք եմ ես
Մի չընթերցված Աստվածաշունչ,
Թե ինձ թերթեք
Նույն «Յայր մերը» պիտի երգեք,
Տիրոջ տված պատգամները կարդաք պիտի:
Փակ գիրք եմ ես,
Մինչդեռ պետք է ինձ միշտ բացել
Եվ ընթերցել...
Ով որ դեպի անձս եկավ –
Նույնն է, թե նա եկեղեցի մտավ հենց նոր,
Փակ գիրք ես ես խորհրդավոր,
Բայց և այնքա՛ն բաց ու արդար,
Որ կույրն անգամ ինձ կկարդա:
Ու թե անսաք գրքիս կանչին
Յաղորդակցվեք պիտի խաչին: